ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿՈՒՂՊԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ IX—XIV ԴԴ.

Հայտնի է, որ IX—X դդ. Հայաստանում ձևավորվում է ֆեոդալական քաղաքը, դառնալով արհեստագործության և առևտրի նշանակալից կենտրոն։ X դարում Հայաստանում կային մոտ երեսունհինգ մեծ ու փոքր քաղաքներ և մեկ տասնյակից ավելի գյուղաքաղաքներ, որոնք խոշոր դեր էին խաղում արհեստագործության և առևտրի զարգացման բնագավառում։ Խոշոր քաղաքներում, որտեղ ավելի նպաստավոր պայմաններ կային տնտեսության այդ ճյուղերի լայն զարգացման համար, առաջացել էին առևտրա-արհեստավորական շարքեր, շուկաներ, խանապար-իշևանատներ, փնդուկ-հյուրանոցներ, որոնք կոչված էին ծառայելու ինչպես արհեստագործական արտադրության կազմակերպմանը և զարգացմանը, ներքին շուկայում արտադրանքի վաճառքին, այնպես էլ արտաքին առևտրին։

Քաղաքներում արհեստավորական շարքերը մասնագիտացված բնույթ են կրել։ Նույնանուն արտադրանք տվող արհեստավորները կենտրոնանում էին մի վայրում։ Հաճախ այդպիսի բաժանումը պայմանավորված էր «տվյալ արհեստի բնույթով, օրինակ կաշեգործները, կավագործները՝ իրենց արհեստանոցները հիմնում էին ավանի կամ քաղաքի միջով կամ նրա կողքով հոսող գետերի և գետակների ափին»[1], քանի որ հոսող ջրի առկայությունը նրանց աշխատանքում խիստ անհրաժեշտ էր։

Արտադրված ապրանքը արհեստավորները երբեմն իրենք էլ իրացնում էին իրենց արհեստանոցում կամ, ինչպես դրանք կոչվել են միջնադարում՝ կուղպակներում։ Ընդհանրապես կուղպակների և մասնավորապես դրանց նվիրատվությունների վերաբերյալ բազմաթիվ հիշատակություններ են պահպանվել մատենագիր և վիմագիր աղբյուրներում։ Կուղպակ-կրպակների մասին ամենավաղ վկայությունը վերաբերում է IX դարի վերջերին։ Գեղարքունիքի Գրիգոր-Սուփան իշխանը Մաքենյաց վանքին նվիրաբերած բազմաթիվ առարկայական, դրամական և հողային նվերների կողքին նշում է նաև կուղպակներ՝ «ե կուղպակ յԱնի»[2]։

Անիի Գրիգոր Պահլավունու եկեղեցու մուտքի բարավորի վրա Գրիգորի կողակից Շուշան տիկնանց տիկինը թողել է երկու արձանագրություն։ Առաջինում՝ 994 թ., Շուշանը եկեղեցուն է նվիրում «զՄրուանա կուղպակս»[3], որ նա գանձագին էր արել, այսինքն գնել էր։ Երկրորդում՝ նույն Շուշանը «ետու զՄրուանա կուղպակն ի սուրբ Գրիգորո : Զ : (80) դրամ: Լ : (30) Սեգային եւ : Ծ : (30) Մրուանա»[4]։ Այստեղ, հավանաբար, գործ ունենք կուղպակի գնի կամ ստացվող եկամտի չափի հետ։

Կուղպակների նվիրատվություններ են պարունակում նաև Վահրամ Պահլավունու 1029 թ. Մարմաշենի[5], Ապլղարիբ Պահլավունու 1035 թ. Անիի Ս. Փրկիչ[6] և Շուշան Պահլավունու եկեղեցիների, ինչպես նաև Աբուղամր մագիստրոսի որդի Գրիգոր եպիսկոպոսի Մարմաշենի արձանագրություններում[8]։

Մոտավորապես նույն ժամանակին է վերաբերում Վահրամ Պահլավունու մեկ այլ արձանագրությունը, փորագրված Անիում Գրիգոր Պահլավունու կառուցած եկեղեցու մուտքի բարավորի վրա, որտեղ կարդում ենք. «Կամաւքն — այ. Ես Վահրամ իշխանաց իշխան, ետու զիմ որդոյն զԱպուխամրի ոգեբաժին եւ գնեցի : Բ : կուղպակ զլորագոյնին եւ զՈրսաւտին (յ)Ոշականց ետու ի սուրբ Գրիգորի...»[9]։ Ամենայն հավանականությամբ այդ կուղպակները գտնվել են Օշական գյուղաքաղաքում։ Այդպիսի դեպքեր եզակի չեն, երբ որևէ կրոնական հաստատություն նվեր է ստացել տներ, կուղպակներ և այլ անշարժ ունեցվածք, որոնք գտնվել են այդ վայրերից շատ ավելի հեռու։ «Արձանագրություններից իմանում ենք,— նկատում է Ն. Մառը,— որ Անիում տների (այստեղ պետք է ավելացնել նաև այգիներ, կուղպակներ, հողակտորներ և այլն—Գ. Ս.) տեր էին իշխանները, ընդհանրապես ազնվականությունը, ինչ-

---

1 Ռ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հատ. 1, Երևան, 1958, էջ 61։

2 «Դիվան հայ վիմագրության», պրակ 4, Երևան, 1973, էջ 290։ Տե՛ս նաև Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 179—181։

3 «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, Երևան, 1966, էջ 31, արձ. № 93։

4 Նույն տեղում, էջ 32, արձ. № 94։

5 «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանյանը, Պետերբուրգ, 1913, էջ 17։

6 «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, էջ 44, արձ. № 126։

7 Նույն տեղում, էջ 49, արձ. № 138։

8 «Վիմական տարեգիր», էջ 70։

9 «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, էջ 32, արձ. № 95։

պես և եկեղեցիներ ու վանքեր, հաճախ տեղավորված Անիից դուրս»[10]։

Կրպակավաճառի և կրպականոցի (այն վայրը, որտեղ գտնվում են կրպակները) վկայության հանդիպում ենք Ներսես Լամբրոնացու մի աշխատության մեջ, ուր կարդում ենք. «Համար տուրևառիցն՝ կրպակաւորացն է գործ յեկեղեցիս որպէս կրպականոց, մի հարկաւորէք զմեզ փայտ համարոյ կախել»[11]։ Լամբրոնացին դիմում է եկեղեցականներին՝ կոչ անելով չզրաղվել առևտրով, քանզի դա կրպակավորների գործն է, և տաճարը չդարձնել շուկա։

Անիից ոչ հեռու, Բագնայրի վանքում նույնպես կան մի քանի արձանագրություններ, որտեղ խոսվում է վանքին նվիրաբերած կուղպակների մասին։ Դրանցից վաղագույնը Գրիգոր Ծագկանի արձանագրությունն է՝ գրված 1042 թ.։ Գրիգորը, եղբոր՝ Մուկաթլի և որդիների պատվին պատարագներ ստանալու համար Բագնայրի Աստվածածին վանքին է նվիրում իր «գանձագին կուղպականին, որ Վասլին փնդկին ընդդեմ է»[12]։ Նույն վանքի մեկ այլ վիմագրում կարդում ենք. «ՈՃԸ (1209) ի յամս աստուածապատիւ տն Սարգսի, որդոյ Ապիրատին, ես խաչերեսս, որդի Արրահամու լաւեցի, ետու զիմ գանձագին եւթն կուղպակն ի շարի, վեց ի վերևն եւ մին ի ներքևն, մզքթին ընդդեմ»[13]։ Արձանագրության այս մասը սխալ է վերծանված եղել. Կ. Կոստանյանը այսպես է ներկայացնում. «....եւթն կուղպակն ի Շարիվեցի վերևն մին ի ներքն... զՔթին ընդդեմ»[14]։ Չնայած մեր ձեռքի տակ չունենք արձանագրության լուսանկարը, սակայն կարող ենք ասել, որ Բասմաջյանի վերծանությունը ավելի հավանական է։ Արձանագրության մեջ խոսվում է Անիի Աբու մա-Ամրան մզկիթի դիմացի կուղպակաշարքի վերևի վեց և ներքևի մեկ կուղպակների մասին։

Անիի մի շարք կուղպակների և նրանցում կատարվող առևտրի իրավական ձևակերպման մասին է խոսվում Աբու մա-Ամրան մզկիթի վրա պահպանված շեդդագյան Քեյ-Սուլթանի արձանագրության մեջ։ Մանուչե Շեդդադյանի ծոռ Քեյ-Սուլթանը գրում է. «Հանուն իմ նախնիների և ժառանգների երկարակեցության, բամբակի և բամբակեղեն գործվածքների վաճառքը թույլատրվում է այստեղից, որտեղ գտնվում է Աբու մա-Ամրան մզկիթը, մինչև Սեբիլ փողոցի կուղպակները։ Մենք կարգադրեցինք առևտուրը այստեղ կազմակերպել»[15]։ Ինչպես նշում է արձանագրության հրատարակիչը, մզկիթին կից տարածության վրա պեղումների միջոցով բացվել են մեծ քանակությամբ կուղպակներ, իսկ դրանցից որոնք են նշված արձանագրության մեջ, նա դժվարանում է ցույց տալ, ենթադրելով միայն, որ այդ կուղպակների մեջ «առավելություն պետք է ստանա նրանցից առաջինը, որ տեղավորված էր մզկիթի դիմաց»[16]։

Անիի վաճառականական դասի ամենացայտուն ներկայացուցիչներից մեկը՝ մեծահարուստ Տիգրան Հոնենցը, 1213 թ. իր միջոցներով նորոգել է տալիս Մայր տաճարի աստիճանները և այդ առիթով «ետու նուէրք ի սուրբ կաթողիկէս զիմ գանձագին կուղպակն որ ի Կատտնոցին է»[17]։ Այս արհեստի անունը անհասկանալի է, թերևս ենթադրելի է «թաղիքագործներ» իմաստը։ Ակնի բարբառում օգտագործվել է կտտել «հրել, մշտել, մխտել» բառը[18], միգուցե խոսքը վերաբերում է բուրդը կտտելուն։

Տիգրան Հոնենցը 1215 թ. իր կառուցած Ս. Գրիգոր եկեղեցուն այնպիսի մեծաքանակ ու բազմապիսի նվիրատվություններ է կատարում, որ կվայելեր միայն թագավորներին։ Ի թիվս այլ շարժական և անշարժ գույքի, եկեղեցին տեր է դառնում երկու կուղպակների, որոնցից մեկը գտնվել է Անիի հրապարակներից մեկում՝ խանապարին (հյուրանոց-իջևանատուն) կից՝ «ի մոդանի խանապարն կուղպակնովն»[19], իսկ մյուսը պատկանել է մեկ այլ մեծահարուստի (Պապենց տոհմին պատկանող խանապարի «դռան կուղպակն»)։

Կուղպակի նվիրատվության հիշատակություն

---

10 Н. Я. Марр, Раскопки в Ани в 1904 году, С. Петербург, 1906, էջ 11։

11 «Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք եւ կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոց պատարագին», Վենետիկ, 1847, էջ 107։ Կուղպակներում որևէ երևացող տեղ կախվել է փայտե սալիկ, որի վրա գրված են եղել տվյալ կուղպակից ստացվող եկամտի կամ տիրոջը տրվող հարկի չափերը («փայտ համարոյ»)։

12 Կ. Հ. Բասմաջյան, Հայերեն արձանագրություններ Անվո, Բագնայրի և Մարմաշինո, Պարիս, 1931, էջ 137—138։

13 Նույն տեղում, էջ 144։

14 «Վիմական տարեգիր», էջ 49։

15 Л. Т. Гюзальян, Персидская надпись Кей-Султана Шеддади в Ани, Сборник академику Н. Я. Марру, М.—Л., 1935, էջ 633։

16 Նույն տեղում, էջ 637։

17 «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, էջ 34, արձ. № 100։

18 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, Երևան, 1973, էջ 664։

19 «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, էջ 63, արձ. № 188, մոդան—մեյդան—հրապարակ։

է պարունակում Հոռոմոսի վանքի 1218 թ. գրված արձանագրությունը. «...ես Վարդաճիժ Վարդեանց ետու զիմ կուղպակն եւ ի ներքեւն տակառք ի վերի փողոցին քանեկից է Տիդրանա»[20]։ Այստեղ ուշագրավ է կուղպակ բառին հաջորդող «ի ներքեւն տակառք» արտահայտությունը, որտեղ խոսքը, հավանաբար, վերաբերում է մառանին։

Հոռոմոսի վանքի սեփականությունների և նվիրատվությունների մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նույն վանքից մի անթվական արձանագրություն. «Հոռոմոսին վանացս հայրենիք, որ ի քաղաքին (իմա՝ Անի— Գ. Ս.) այս են... Վահրամ ետ կուղպակ ի Դարբնո փողոցին մատ ի սբ Գրիգորն»[21]։ Պարզվում է, որ Անիի Ս. Գրիգոր եկեղեցու մոտ ձգվել է դարբինների թաղ-փողոցը։

Անիից ոչ հեռու գտնվող Խծկոնքի վանքը նույնպես ունեցել է սեփական կուղպակներ։ Այդ մասին են վկայում մի քանի արձանագրություններ, որոնք գրվել են XIII դարում։

1220 թ. ոմն Խաչոտ՝ Շեխյանց տոհմից և նրա ամուսին Ավագտիկինը միաբանում են Խծկոնքի Ս. Ուխտին և տալիս իրենց «հայրենի տներն, որ ընդդէմ Դոգոնց ս. Սարգսի է և զկուղպակն որ ի վերա Ծոաղուկակին է»[22]։ «Ծոաղուկակը» Անիի փողոցներից մեկի անունն է և քանիցս հանդիպում է արձանագրություններում[23]։

1233 թ. Սամուել Անեցու թոռ Աբրահամ երեցը Խծկոնքի վանքին է նվիրում իր նորաշեն երկու տունը «եւ ի վերէն : Բ : կուղպակ»[24]։ Այստեղ նվիրվել են Աբրահամ երեցի երկհարկանի տան երկրորդ հարկի կուղպակները։ Արձանագրության նախավերջին նախադասությունը թույլ ակնարկ է եկեղեցուն նվիրաբերված առարկաների կամ գույքի առուծախի մասին, իզուր չէ, որ արձանագրության հեղինակը վերջում գրում է. «հայր ոք յանդգնի ծախել կամ գրաւկանել, մի գտցէ ողորմութիւն ի տեառնէ»։ Հեղինակը արձանագրության մեջ «գրավկանել» (գրավ վերցնել) բառը օգտագործել է գրավ տալու իմաստով։

Նույն թվականին Ջեչկանց տոհմից Վահրամը Բագնայրի վանքին է նվիրում կուղպակներ։ Նվիրատուն տալիս է իր «գանձագին կուղպակն ի փողոցկտերն, որ ի Թորոսոնց կուղպակին վերա է և զայն տունն, որ Սեքթենց հիմնակից է, եւ ի վերայն կուղպակն»[25]։

Արճեշում գտնվող կուղպակների մասին ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Կիրակոս Գանձակեցու մոտ[26]։ Պատմելով Վասպուրականի երևելի վարդապետների մասին, նա նշում է Աստվածատուր վարդապետին, որն Արճեշ քաղաքից էր։ Լինելով մեծահարուստ ընտանիքի զավակ, նա իր ծնողների մահվան առիթով զոհաբերություններ է կատարում. «Առեալ ոսկի և արծաթ՝ արկանէր ի ձեռս մօր իւրոյ և կոչէր զաղքատս առնուլ ի ձեռաց մօրն, որպէս թէ ինքն իսկ իւրովք ձեռօքն իցէ տուեալ», իսկ հոր թաղման ժամանակ «զամենայն ինչս բաշխեաց կարօտելոց»։ Այնուհետև պատմիչն անդրադառնում է վարդապետի «բազումք» կուղպակներին, որոնք «եռ ի վարձու և յամենայն ամի առեալ զինսն» (իմա՝ հասույթը, եկամուտը), որով նա գնում է ոչխարի մորթիներ ու կտավ, իր ձեռքով հագուստ կարում և բաժանում աղքատներին։ Պարզվում է, որ Աստվածատուրը, լինելով կրոնավոր, միաժամանակ զբաղվել է արհեստով (դերձակությամբ)։

Պահլավունյաց Շարափշահ իշխանի ամուսին Թագուհին 1230-ական թթ. Բագնայրի ուխտին է նվիրում «Սառնփողոցին կուղպակը»[27]։ Արհեստավորական այս փողոցը Անիի հայտնի թաղերից էր։ Կուղպակներ է նվիրում նաև Շարափշահի դուստրը՝ Թաիկը, որի կուղպակները գտնվել են պայտարների արհեստավորական թաղում. «Ետու երկու կուղպակ յիմ կուղպականոյն, որ ի Նալպնդրնոցին»[28]։

XIII դարում հայ իրականության մեջ հանդես եկած առևտրա-վաշխառուական դասի ներկայացուցիչներից մեկը, Առյուծը՝ Հոգևորյանց տոհմից, իր կողակից Սեդայի հետ Հոռոմոսի վանքին է նվիրում իրենց հայրենի կուղպակը, «որ ի կաւշկակարոցին, քանակից է վերի դեհն Տիգրանայ ներքի Սլքերոյն»[29]։ Այս նույն Առյուծը 1277 թ. Հոռոմոսի վանքին է նվիրում նաև «նշխարատուն»։

Այս դասի մեկ այլ ներկայացուցիչ՝ Ղազարի որդի Ալեքը և նրա ամուսին Մլրքսթին Հոռոմոսի վանքին են նվիրում իրենց գնած կուղպակը, որն «ի Ծոաղուկակին»[30]։ Այս նվիրա-

20 «Վիմական տարեգիր», էջ 61։
21 Նույն տեղում, էջ 241։
22 Նույն տեղում, էջ 63։
23 Ծոաղուկակ հավանարար պետք է հասկանալ «Ծուռ փողոց» (զուկակ—փողոց)։
24 «Վիմական տարեգիր», էջ 76։
25 Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 159։
26 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց. աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 183—184։
27 Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 162։
28 Նույն տեղում, էջ 163։
29 «Վիմական տարեգիր», էջ 95։
30 Նույն տեղում, էջ 110։

տուն մի կուղպակ է նվիրում նաև Բագնայրի վանքին «Զի (1271 թ.) Շնորհիւ Աստուծոյ ես Ալէքս վաճառական, որդի Ղազարայ Միարանեցայ Սուրբ Աստուածածին, ետու նուէր ի Բազրզիողոցին կուղպակ մի»[31]։ Այստեղ Ալեքս հորջորջված է «վաճառական», որը կարևոր վկայություն է նրա դասային պատկանելությունը որոշելու տեսակետից։

Հայաստանում XII դարի վերջում առաջացած իշխանական տներից էին Ուքանանք, որոնք արդեն XIII դարում տեր են դառնում մեծ տիրույթների։ Այս տոհմից առանձնապես աչքի ընկան Ուքան Քարիմադինը և Պապքան Վախրադինը, որոնք իրենց կառուցած վանքերին և եկեղեցիներին մեծամեծ նվիրատվություններ են անում։ Այդ է վկայում Անիից ոչ հեռու գտնվող Կարմիր վանքի արձանագրություններից մեկը, որտեղ մեկենասները վանքին նվիրում են «գանձագին հայրենիքն զխանապ[ա]ին գանկն որ միջաւրեն էր Շահապին զվերեւն եւ զներքեւն և զհարաւ կողմանն կուղպականովն...»[32]։

Կուղպակների նվիրատվության դեպքերի հանդիպում ենք նաև Հայաստանի մյուս շրջաններում։ Հաղբատի արձանագրություններից մեկում կարդում ենք. «Կամաւն Ա[ստուծո]յ են՝ դեղ-կ-. Յովանիսի որդիս Լոռեցի, որ ետու ի ս[ուրբ]ը ուխտս Հաղբատա զիմ կուղպակն ի Զահերեն գնած...»[33]։ Նույն բնույթի մեկ այլ արձանագրություն պահպանվել է Հավուց Թառի Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատին. «Աւգնութիւն այ. ես Խուցիկ եղէ միարան սբ ուխտիս Հաւութա[ն]ո եւ ետու զ[եկեղեցիս կուղ]պակն եւ : Ի : դահեկան...»[34]։ Կուղպակը հավանարար գտնվել է Երևանում։

Հոռոմայրի վանքում նույնպես կա նվիրատվություն պարունակող արձանագրություն. «Ի թուին : ՉԼԹ : (1290) ես Սարգիս Ճոճկանանց, եւ ամուսին իմ Արգուխաթուն միարանեցաք սուրբ Նշանիս, շինեցաք զանգակատունն եւ ետու զիմ հայրենի ջրաղացն, կուղպակն, արտերն...»[35]։ Սարգիսը, հավանաբար, տեղացի մեծահարուստներից է, որ կառուցելով վանքի զանգակատունը, այդպիսի նվիրատվություններ է կատարել։ Ամենայն հավանականությամբ կուղպակը գտնվել է Լոռե քաղաքում։

Ուշագրավ արձանագրություն է մեզ հասել Արճեշից։ Դրանից իմանում ենք, որ 1291 թ. Քաջբերունյաց գավառի «տեսուչ» տեր Աբրահամը Արճեշի Աստվածածին եկեղեցուն է նվիրել «...ի քաղաքին տներ եւ : Բ : կուղպակ»[36]։ Ուշադրության արժանի է արձանագրության մեջ «տեսուչ» տերմինի առկայությունը, որն այստեղ, հավանարար, օգտագործվել է եպիսկոպոս իմաստով։

Նախճավան քաղաքի կուղպակների մասին է Ստ. Օրբելյանի մոտ պահպանված հիշատակությունը։ Երբ էլիկում Օրբելյանը հիվանդանում է, նրան այցի է գալիս էլտկուզ աթաբեկը և հիվանդի մանկահասակ Լիպարիտ որդուն, ի թիվս այլ պարգևների, նվիրում «...ի Նախջաւան աւագ փողոցին 30 կուղպակ», որպես «յազգէ յազգ հայրենիք»[37]։

Նվիրատվական գործարքների մասին գրառումներ են հանդիպում նաև հայերեն ձեռագրերում։ Այդ բնույթի հիշատակություններ հիմնականում տեղ են գտել Վասպուրականի նահանգի վանքերում գրված ձեռագրերում։ Ինչպես նշում է ՀՍՍՀ ԳԱ ակադ. Լ. Խաչիկյանը, «նթն Հայաստանի մյուս շրջաններում՝ Այրարատում, Սյունիքում, Արցախում տնտեսական գործարքները իրենց արտացոլումն են գտել վիմագրերում, ապա Վասպուրականում գերադասել են այդ նույն նպատակի համար օգտագործել վանքերում պահվող ձեռագրերը, որոնց վրա գրանցումներ կատարելը տեխնիկական դժվարությունների և մեծածախ աշխատանքների հետ կապված չի եղել»[38]։ Այդպիսի մի նվիրատվական փաստաթուղթ հանդիպում ենք 1303 թ. Վասպուրականի Դրիգոր Լուսավորչի անապատում գրված ձեռագրում։ Հիշատակագրություններից մեկում կարդում ենք. «Ես սիր Սիմոնս, որ տվի զիմ խանութն որ ի Քաֆկտրնոցն ոխֆ (իմա՝ վակֆ—Գ. Ս.)՝ ի սուրբ Լուսաւորիչն անջինջ, որ քանի յայն աւր Վարագայ խաչին կիրակէն պատարագ լինի, որ դրել եմ ինձ հոգեբարձ զԹագվորշահն, որ զիմ հոգիս զինչ աստուած իւր ցուցնէ։ Եւ խանութին հատերն՝ մէկ դեհն մեծ պարոն Յատարն ու մէկն կա-

31 Բ ա ս մ ա ջ յ ա ն, նշվ. աշխ., էջ 179։

32 Н. А. О р б е л и, Избранные труды, Ереван, 1963, էջ 474։

33 Կ. Գ. Ղ ա ֆ ա գ ա ր յ ա ն, Հաղբատ, Երևան, 1963, էջ 206, արձ. № 772. հրատարակիչը կարծում է, որ արձանագրության սկզբում հավանարար պետք է կարդալ. «Կամաւն Ա[ստուծո]յ ես Դեղիկս»։

34 Վերցրել ենք մեր հավաքածուից։

35 «Վիմական տարեգիր», էջ 131։

36 Նույն տեղում, էջ 134։

37 Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 289։

38 Լ. Խ ա չ ի կ յ ա ն, Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերում և նրանց աղբյուրագիտական նշանակությունը, «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 22։

բապետ աղեղրարան ու մէկն Սուլէման դանուշ-մանն ու մէկն ճանապարհն, որ առաջի և ի թվ ՉԾԲ (1303)»[39]։ Այստեղ «Քաֆկտրնոց» բառը մի քանի ձևով կարելի է մեկնաբանել։ Նախ՝ որպես սպանդանոց, ինչպես ենթադրել է Լ. Խաչիկյանը, այնուհետև հնարավոր է այդ բառի օգտագործումը տեղանվան իմաստով և, վերջապես, ուշագրավ է «կտրնոց-կտուր» բառամասը, որը թույլ է տալիս մտածել, թե այդ խանութը գտնվել է ինչ-որ շինության (քաֆ) կտրին, վերևում։ Հիշատակության առաջին մասը նկարագրում է այն սահմանները (բառացի հատման կետերը), որ ուներ Սիմոնի նվիրած խանութը (իմա՝ առևտրական կուղպակը). այն մի կողմից (դեհ-կողմ) կից էր պարոն Հատարի տանը, մյուս կողմից՝ աղեղագործ Կարապետի տուն-արհեստանոցին, երրորդ կողմից՝ Սուլեման գիտունի կամ իմաստունի տանը և, վերջապես, չորրորդ կողմից սահմանն էր ճանապարհը, որն անցնում էր խանութ-կուղպակի առջևից։

Բագավանի տաճարի հարավ-արևելյան մույթի հյուսիսային կողմում ոմն Հովակիմ «ի քաղաքէ [Կեյսարոյ», տալիս է իր «դրամագին կոպակն յայս սուրբ եկեղեցիս»[40]։ Արձանագրության հրատարակիչը քաղաքի անունը չի վերականգնել, սակայն մեզ թվում է, որ խոսքը Կեսարիա քաղաքի մասին է։

Հովհաննեսի որդի Շապադինը 1348 թ. Անիի Առաքելոց եկեղեցուն մի շարք նվերներ է տալիս, այդ թվում նաև Ամիր Հասանից գնած մի կուղպակ, որը գտնվել է «Գդակկրոցի [խանյապրի դռան դիմաց»[41]։

Երևանի մեծահարուստներից Գեշմարդը տեղի Աստվածածին եկեղեցուն է նվիրում «։Բ։ կուղպակն ներքնատներովն ու խղիրովն»[42]։ Այստեղ ուշագրավ են կուղպակներին կից հիշատակված օժանդակ հարմարությունները՝ ներքնատներն ու խղիրը[43]։

Անիից ոչ հեռու գտնվող Առջոառիճ վանքի արձանագրություններից մեկում Լուսոտը և Ապահերժի որդի Գրիգորը վանքին են նվիրում «Փոլկարարոց կողպակն և տունն ի ներքևն» և «Սարաճփողոցի կուղպակն»[44]։

Հոռոմոսի վանքի մի վիմագիր վավերագրում Աստվածատուրի որդի Առյուծը վանքին է նվիրում «ի յԱնի բուն փողոցին... գանձագին կուղպակն, որ շինեցի ներքի դեհն քանակից է Աւետեանց Բ կուղպակի կտերն, մէկն ի վերա կուղպակին է և մէկն իւրենն դիմաց»[45]։ Հեղինակը «բուն փողոց» ասելով նկատի ունի Անիի Գլխավոր փողոցը կամ պողոտան[46]։

Կուղպակների մասին շատ հետաքրքիր և յուրօրինակ վկայություններ են պահպանվել Գրիգոր Տաթևացու մոտ։ Այստեղ պատմիչը հիմնականում անդրադառնում է առևտրական կուղպակներին և ստուգաբանում. «կողբակ որ է գողի բակ»[47]։ Մոտավորապես նույն իմաստն է արտահայտում Գրիգոր Կամախեցու «Ժամանակագրության» մեջ նշված հատվածը. «Թէ՞ գողբակ մի նստիք առևտուր և վաճառ մի առնէք, զի շատ ծանրագույն մեղանք է»[48]։

Կուղպակ կամ կրպակ տերմինը բառարաններում բացատրված է «խանութ, գինետուն»[49]։ Սակայն քանի որ խանութ իմաստը ենթադրում է առևտրական կուղպակ, ապա բառարանային իմաստներին պետք է ավելացնել նաև «արհեստանոց», որովհետև, ինչպես պարզ դարձավ վերևում հիշատակված արձանագրությունների հատվածներից, կուղպակները կոչվել են զանազան արհեստների անուններով և ակնհայտ է, որ դրանք եղել են արհեստանոցներ։ Այս տերմինն առաջացել է պահլավերեն «kurpak»— խանութ բառից, պարսկերենում խանութը արտահայտվել է «kurba» բառով։ Պարսկերենից են փոխառնված արաբերեն qurbaj, kurbaj կամ qurbak—խանութ բառերը։ Վրացերենում նույնպես խանութը նույն բառով է արտահայտվում, օրինակ՝ «մեքուրբաքե», որ նշանակում է խանութպան[50]։ Վրաստանի Աթենի տաճարի հարավային պատին շատ հետաքրքիր արձանագրություն է պահպանվել, որտեղ նշված է Աթենի բերդի պարետի կողմից տներ և կուղպակներ [illegible]

39 Նույն տեղում, էջ 23։

40 И. А. Орбели, Избранные труды, էջ 468։

41 «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, էջ 29, արձ. № 68։

42 Կ. Գ. Ղաֆադարյան, Երևան. Միջնադարյան հուշարձանները և նրանց արձանագրությունները, Երևան, 1975, էջ 138, արձ. № 2։

43 Խղիր-խուղ, տաղավար, փոքր խուց։

44 «Վիմական տարեգիրք», էջ 223։

45 Նույն տեղում, էջ 240—241։

46 Մառի աշակերտները այդ փողոցը կոչել են «Մառի փողոց» (տե՛ս Լ. Գյուզալյանի վերը նշված հոդվածը)։

47 Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, նորին ամառան հատոր, Կ. Պոլիս, ՌՃՂ, էջ 25։

48 «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ», Երուսաղեմ, 1915, էջ 343—344։

49 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, էջ 684։

50 Նույն տեղում։

քոլբագի) կառուցելու մասին[51]։ Խոսվում է նաև Վրաց Բագրատ թագավորի կողմից այդ կառուցումների համար տեղ հատկացնելու մասին։

Կուղպակները իրենց կառուցվածքային ձևերով եղել են մեկ կամ երկու հարկանի, հաճախ ներքնատներով, պահեստարաններով։ Որպես կանոն դրանք եղել են արհեստավորի բնակարանին կից կամ դրա երկրորդ հարկում։ Կուղպակների ճարտարապետական կառուցվածքի մասին որոշ պատկերացում կարող ենք կազմել Անիի պեղումների ժամանակ բացված տնտեսական բնույթի շինությունների, վիմագրական և մատենագրական աղբյուրների հաղորդումների հիման վրա։

Առավելապես ուշագրավ են Անիի հնագիտական արշավախմբի տասներորդ սեզոնի աշխատանքների ժամանակ բացված վաճառատներն իրենց կուղպակներով, որոնք տեղավորված են եղել Աբու մա-Ամրան մզկիթի արևմտյան և արևելյան կողմերում։ Այդ վաճառատները նկարագրել է ճարտարապետ Թ. Թորամանյանը. «Զույգ վաճառատները հետաքրքրական են իրենց ներքին ընդարձակ բացօթյա բակով և երկհարկանի շուրջանակի փոքր սենյակներով։ ...Ներսի կողմեն ոչ նվազ վայելուչ էր վաճառատունը իր գեղեցիկ բարձրաքանդակներով շրջապատված դռներով, գույնզգույն քարերով, իրարու մեջ հագցված դռների ճակատներով»[52]։ Անշուշտ, այս վաճառատունը իր մեջ ընդգրկել է առևտրական կուղպակների մի ամբողջ շարք։ Ինչպես տեսնում ենք, այս վաճառատան կուղպակների շինությունները ճարտարապետական-կառուցվածքային տեսակետից բավական յուրօրինակ և ճոխ տեսք են ունեցել։

Վերևում հիշատակված արևելյան շարքի մի կուղպակի ներքնահարկում բացվել են վեց կավե կարասներ։ Այս նույն շարքում «...հիշատակության արժանի է փականագործական արհեստանոցը, ինչպես նաև արհեստանոցներ, որտեղ բացվել են հալոցներ»[53]։

Միջնադարյան կուղպակ-արհեստանոցների կառուցվածքը պատկերացնելու տեսակետից խիստ արժեքավոր է Գեղմարգի արձանագրությունը Երևանի կաթողիկեի վրա, որտեղ նշված են կուղպակներին կից օժանդակ հարմարությունները։

Իրենց բնույթով կուղպակները երկու տեսակ են եղել։ Կուղպակ են անվանվել և՛ այն հաստատությունները, որոնցում զբաղվել են արհեստով ու որտեղ արհեստավորը սովորական օրերին վաճառել է իր արտադրանքը, և՛ այն կուղպակ-կրպակ-խանութները, որտեղ միայն առևտուր է կատարվել։ Եթե առաջինները գտնվել են գերազանցապես արհեստավորական թաղերում կամ շարքերում, ապա երկրորդների տեղաբաշխումը բավական լայն շրջանակներ է ընդգրկել. այդպիսի կուղպակներ եղել են շուկաներում, տոնավաճառներում, գլխավոր փողոցներում, հրապարակներում, խանապարհերին կամ պանդոկ-փնդուկներին կից։ Մի վիմագիր հիշատակություն թույլ է տալիս ենթադրելու, որ որոշ արհեստավորական թաղեր ունեցել են իրենց խանապարը[54]։

Ժամանակագրական առումով կուղպակների այս երկու տիպերի մեջ որոշ տարաբաժանում կա. եթե արհեստագործական կուղպակները լայն տարածում են ունեցել IX—XIII դդ., ապա հետագայում առևտրի զարգացմանն ու մասնագիտացմանը զուգընթաց ավելի ստվարանում են կուղպակ-կրպակ-խանութները։

Հարկ է նշել, որ քաղաքներում արհեստավորական թաղերի կամ շարքերի գոյությունը ենթադրում է այդտեղ համքարությունների առկայությունը։ «Ինչ էին դրանք (իմա՝ թաղերը կամ շարքերը—Գ. Ս.),— գրում է ՀՍՍՀ ԳԱ ակադ. Բ. Ն. Առաքելյանը,— եթե ոչ համքարություններ, որոնք քաղաքներում զբաղեցնում էին առանձին թաղ կամ շարք, այդտեղի բոլոր կուղպակ-արհեստանոցները, որտեղ և արտադրում էին ու վաճառում իրենց արտադրանքը և որտեղ մուտք գործել չէին կարող տվյալ համքարության մեջ չընդգրկված կողմնակի արհեստավորները»[55]։ Արհեստագործական արտադրության վաճառքի հետ կապված հարցերը լուծվում էին համքարական «ծերերի ատյանի կողմից»[56]։ Կային, անշուշտ, առանձին գործող արհեստավոր-առևտրականներ, սակայն սրանք հաճախ չէին գիմանում մրցակցությանը համքարականների հետ, քանի որ հենց համքարությունն էր, «որն ապահովում էր նրա մեջ միավորված արհեստավորների հաղթանակը «անկազմակերպ» արհեստավորների նկատմամբ»[57]։

---

51 Н. А. Джавахов, К вопросу о времени построения грузинского храма в Атене по вновь обследованным эпиграфическим памятникам, ХВ, I, вып. 3, Петербург, 1912, էջ 290:

52 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. 2, Երևան, 1942, էջ 350։

53 Л. Т. Гюзальян, Персидская надпись..., էջ 637։

54 Տե՛ս Անիի Ս. Առաքելոց եկեղեցու Շապագինի արձանագրությունը, գրված 1348 թ.։

55 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները..., հատ. 2, էջ 181։

56 Նույն տեղում, էջ 199։

57 Նույն տեղում, էջ 178։

Կուղպակների նվիրատվությունները միջնադարում բավական մեծ չափեր են ընդունել։ Այդ հաստատությունները աշխարհիկ կամ հոգևոր անձինք նվիրվել են եկեղեցիներին ու վանքերին, որպես փոխհատուցում ստանալով պատարաղներ։ Նվիրված կուղպակները դառնում էին նոր տիրոջ սեփականությունը «յազգէ յազգ հայրենիք»[58], բավարարելով նրան ոչ միայն արհեստագործական առարկաներով, այլև դրանց վաճառքից ստացված եկամուտով։ Կուղպակների նվիրատվությունների մասին Բ. Ն. Առաքելյանը նշում է, որ «...կուղպակներն իրենց արհեստավորներով չէին նվիրաբերվում, նրանք գործող կուղպակներ չէին, այլ խոսքը վերաբերում է կուղպակի դատարկ շենքին, ինչպես և քաղաքներում գտնվող դատարկ տներին, որոնք վաճառվում էին կամ նվիրաբերվում և իրենց տերերին եկամուտ բերում օգտագործվելով իբրև կուղպակ՝ արհեստանոց, խանութ, կամ պահեստ»[59]։

Կուղպակների նվիրատվությունները հիմնականում երկու ձևով են կատարվել։ Նվիրատուներից ոմանք նվիրել են իրենց սեփական կուղպակները, իսկ մյուսները՝ ուրիշից գանձագին արված կամ գնածները։

Կուղպակները ոչ միայն նվիրվել են, գնվել և վաճառվել, այլև վարձով են տրվել։ Այս կապակցությամբ հետաքրքիր է վերևում մեջբերված հատվածը, որտեղ Կիրակոս Գանձակեցին խոսում է Արճեշի Աստվածատուր վարդապետի բազում կուղպակների և դրանք վարձով տալու մասին։

Այստեղ հարկ է անդրադառնալ նվիրատուների սոցիալական կազմի փոփոխություններին, որ տեղի ունեցավ խնդրո առարկա ժամանակաշրջանում։ Վիմագրական հիշատակությունները վկայում են, որ IX դարից մինչև XIII դ. սկզբները հիմնականում նվիրվել են գնված կամ գանձագին տրված կուղպակները, իսկ նվիրողները եղել են իշխաններ կամ իշխանական տների այլ ներկայացուցիչներ։ XIII դարում արդեն հանդես են գալիս նոր բնույթի մեծահարուստներ, որոնք շատ հաճախ իշխանական ծագում չունեին և իրենց հարստությունը դիզել էին զբաղվելով արհեստագործությամբ և առևտրով։ Սրանք սովորական արհեստավորից կամ առևտրականից վեր էին ածվում բազմաթիվ ու բազմապիսի արհեստագործական ու առևտրական օբյեկտների և այլ անշարժ ունեցվածքի տերերի և այժմ կարող էին նվիրել ոչ թե գնած, այլ իրենց սեփական տներն ու կուղպակները։ Պատահական չէ, որ XIII—XIV դդ. կուղպակներ նվիրողների մեծ մասը նորահայտ մեծահարուստ տների ներկայացուցիչներ են։ Վերջապես այս ժամանակ է երևան գալիս կուղպակները, տները և այլ արտադրական ու առևտրական օբյեկտները վարձով տալու երևույթը՝ որպես եկամտի աղբյուրի նոր ձև։

Հայ մատենագրության մեջ շատ ուշագրավ հիշատակություններ են պահպանվել առևտրական կուղպակներում երբեմն տեղ գտած խաբեությունների ու չարաշահումների մասին. կուղպակավոր առևտրականները հաճախ անվանվել են «գողեր ու զրկողներ»[60]։

Վերջում ցանկանում ենք ներկայացնել արձանագրություններում և մատենագրության մեջ հիշատակված այն արհեստավորական շարքերն ու փողոցները, որոնք մեզ հաջողվեց պարզել օգտագործված նյութերի հիման վրա։

Արհեստավորական բաղեր կամ շարքեր

«Բազզփողոց»— կտավագործների կամ ջուլհակների թաղ Անիում։

«Դդակկրոց»— գլխարկագործների թաղ իր խանապարով՝ Անիում։

«Դարբնո-փողոց»— ձգվել է Անիի Ս. Գրիգոր եկեղեցու մոտով։

«Կաւշկակարոց»— կոշկակարների այս թաղը «կից է եղել Տիգրան Հոնենցին պատկանող ուստի և նրա անունով հիշատակված թաղին»[61]։

«Կատտնոց»— մեզ առայժմ անհայտ մասնագիտացմամբ արհեստավորական թաղ Անիում։

«Նալպնդնոց»— պայտարների թաղ Անիում։

«Փոլկարարոց»—թաղ Անիում, որտեղ, թերևս, զրաղվել են համետագործությամբ[62]։

«Սառաճփողոց կամ Սառճփողոց»— թամբագործների շարք Անիում, հիշատակված է երկու անգամ։

Փողոցներ

«Աւագ փողոց»— գտնվել է Նախիջևանում, ունեցել է տասնյակ կուղպակներ։

---

58 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 289։

59 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները..., հատ. 2, էջ 22։

60 Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, նորին ամառան հատոր, էջ 25։ Այդ մասին տե՛ս նաև Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 107։

61 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները..., հատ. 2, էջ 182։

62 Նույն տեղում։

«Սիրիլի» փողոց— ձգվել է Անիի Աբու մա-Ամրան մզկիթի մոտով։ Այստեղ գտնվող կուղպակները մասնագիտացված են եղել բամբակն գործվածքեղենի արտադրության և վաճառքի մեջ։

«Ծոազուկակ»— փողոց Անիում, բառացի «Ծուռ փողոց», այստեղից նվիրված կուղպակները հիշատակված են երկու անգամ։

«Բուն փողոց»— գտնվել է Անիի կենտրոնում, Մաոի աշակերտների կողմից անվանվել է նաև «Մաոի փողոց»։

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

БРОНЗОВЫЕ ПОЯСА ИЗ ЛЧАШЕНА И СТЕПАНАВАНА

В последние годы на территории Армянской ССР найдены новые гравированные бронзовые пояса. Изображенные на них батальные, охотничьи и культовые сцены представляют собой замечательные творения древних художников. Исследование этих изображений позволяет составить представление о быте и обычаях населения древней Армении. К числу наиболее интересных относятся пояса из тонкой листовой бронзы, случайно обнаруженные при земляных работах в 1960 г. в Лчашене (3 экземпляра) и в 1955 г. в Степанаване (1 экземпляр).

Сохранившаяся часть первого лчашенского пояса имеет длину 86 см и ширину 13,5 см (рис. 1 а). Края и центральная часть пояса обломаны, однако это не мешает общему восприятию изображения. Вдоль всего пояса сверху и снизу проходит бордюр из трех рядов «бегущей спирали», символизирующей вечное движение солнца, окаймленной с обеих сторон короткими косыми штрихами. Внутреннее пространство пояса разделено на три орнаментальные полосы, каждая из которых украшена заштрихованными клиновидными и ромбовидными узорами и такими же вертикальными узорами, разделяющими эти три части.

Основными изображениями на каждой полосе являются скачущие олени и козы. Наиболее богата рисунками левая полоса, где изображены две козы и козел. Животные показаны в стремительном беге, с вытянутыми вперед передними и чуть подогнутыми задними ногами; небольшие головы увенчаны изящными заостренными рогами. Морды животных удлиненные, у одной козы приоткрыт рот. На левой полосе есть и другие изображения, причем некоторые из них трудно понять. Перед мордой и над спиной правой козы прочерчены слегка заштрихованные овалы с примыкающими к ним снаружи кружками. Сплошь заштрихованный овал помещен между рогами козы. Между ее передними и задними ногами помещены два соединенных вершинами треугольника с примыкающими к месту соединения с обеих сторон эллипсами, отдаленно напоминающие летящую птицу. Под и над средней козой также имеются овалы с кружками, аналогичные овалам, прочерченным рядом с правой козой. Перед мордой животного изображена шагающая птица. Слева помещена фигура бегущего козла с напрягшимся членом, который, по-видимому, преследует самок. Перед его мордой тоже находится фигура птицы.

Центральная полоса украшена тремя фигурами стремительно бегущих коз. Под туловищем средней козы изображен уже знакомый нам по рисунку на левой полосе овал, под брюхом правой козы— птица головой к животным, от которой сохранилась только передняя часть. По-видимому, левая и центральная части пояса (хотя они и отделены друг от друга вертикальной линией) составляют единую композицию. Древний художник показал сцену преследования самцом пяти самок. Фигуры птиц, являющиеся символами бога неба, солнца и плодородия, здесь имеют двоякое значение. Судя по рисунку на первой полосе, птицы благословляют оплодотворение, а на центральной полосе птица задерживает самок, стремясь содействовать осуществлению этого акта.

Правая полоса пояса украшена такими же гравированными изображениями животных. Впереди мчится коза и олениха, которых преследует самец оленя с напрягшимся членом. Фигура козы ничем не отличается от изображений животных на других частях пояса. Олени показаны в стремительном беге, с выброшенными вперед передними и подогнутыми задними ногами. Шеи у них вытянуты, небольшие